



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՆ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՃԱՇԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 7 Յունիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Արժանապատիւ Տ. Ռազմիկ Քիւնյ. Խաչատուրեան եւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ մասնակից եղան «Արարատ Տան» Միշըն Հիլզի կեդրոնին մէջ կազմակերպուած ճաշի ընդունելութեան մը: Ամսական դրութեամբ տեղի ունեցող այս ընդունելութիւնը հովանաւորուած էր ՀՕՄԻ Շրջ. Վարչութեան եւ այլ նուիրատուներու կողմէ:

Ընդունելութեան ներկայ եղան Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ անդամներէն Տեառք Խաչիկ Երեցեան ու Կարէն Բենեասեանս:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ այս առիթին համար Աստուծոյ փառք տալով, գնահատանքի խօսք ուղղեց «Արարատ Տան» պատասխանատուներուն, ՀՕՄԻն, եւ այս ամսուան բոլոր հովանաւորներուն: Ան յատկապէս գնահատանքով արտայայտուեցաւ հիւրընկալ Տան ժողովրդանուէր ծառայութիւններուն մասին, որոնք կտրած են աւելի քան վեց տասնամեակներու ճամբայ, վայելելով մեր համայնքին սերն ու յարգանքը:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEMBERS ATTEND ARARAT HOME LUNCHEON

On Tuesday, June 7th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council members attended the monthly luncheon held at Ararat Home in Mission Hills. This month's lunch was sponsored by the Armenian Relief Society Regional Executive and Chapters, and a number of individual sponsors.

The Prelate was accompanied by Rev. Fr. Razmig Khatchadourian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mrs. Khatchig Yeretizian and Mr. Kahren Beniasians.

The luncheon began with the blessing of the tables by the Prelate, who also delivered his message on his occasion. The Prelate commended the

board and administration of Ararat Home for the services the care and services they have been providing the elderly for over sixty years, and also commended the A.R.S. and all the day's sponsors for their encouragements and support of Ararat Home's mission.